ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2025թ. թիվ 99-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողի 19.02.2025թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վերաբերյալ ստացված ահազանգի նյութերն ուսումնասիրելու և դրանց վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու նպատակով հարուցել վարչական վարույթ և նշանակել ծառայողական քննություն:

2. Ծառայողական քննության անցկացումը հանձնարարել մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին:

3. Ծառայողական քննության ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել համապատասխան եզրակացություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 19
ք.Վանաձոր